«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՝ Առաջին դասարանցիների ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը գրաճանաչողության գործընթացում

ԱՌԱՐԿԱ՝ մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Սվետլանա Ալեքսանյան

ՄԱՐԶ՝ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ <<Շ.Շահամիրյանի>> կրթահամալիր

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3
Գրական ակնարկ
Գլուխ 1 Գրաճանաչության մեթոդիկայի ընդհանուր բնութագիրը
1.1Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում……..……5

1.2 Գրաճանաչության ժամանակակից մեթոդները……...6

Գլուխ 2 Ազգային և համամարդկային արժեքների ձևավորման ուղիները առաջին դասարանցիների ուսուցման գործընթացում

2.1 Ազգային և համամարդկային արժեք հասկացությունները դպրոցականների արժեհամակարգում……13

2. 2. Դասապլանների մշակումը և փորձարկումը մայրենիի դասաժամերին.....18

Եզրակացություն……24
Օգտագործվող գրականության ցանկ……25

Ներածություն

«Բավական չէ ազգասեր ու հայրենասեր լինելը, պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, զգվել հարազատ մոր հարազատ լեզուն. այս սերը միայն կբանա մեր առջև մեր լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղցրությունը»:

Միքայել Նալբանդյան

Թեմայի արդիականությունը: Արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ընբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է դպրոցների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հետամուտ լինի ուսուցման գործընթացի կատարելագործման,արդիականացման արդյունավետ ուղիների որոնմանը,ինչը հետաքրքիր կդարձնի դպրոցականների կրթությանն և դաստիարակությանն ուղղված մանկավարժական գործընթացը:Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում անհրաժեշտ է կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը ,այլ հետագայում երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը:Ուսուցման և դաստիարակության գործընթացք պետք է իրականացվեն միաժամանակ, մեկը մյուսից բխելով:Մայրենի

լեզվի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության,մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների,համակեցության պարզ կանոների ձևավորումն է,ազգային և համամարդկային արժեքների դաստիարակությունը:

Հետազոտության նպատակը՝աջակցել գրաճանաչողության գործընթացում ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը առաջին դասարանում:

Հետազոտության խնդիները՝

- Ուսումնասիրել գրաճանաչողության ժամանակակից մեթոդները և դրանց առանձնահատկությունները:
- Մշակել դասապլանի օրինակներ,որի արդյունքում աշակերտների մոտ կձևավորվեն ազգային և համամարդկային արժեքներ:
- Հասկանալ և վերլուծել դասի վերջնարդյունքները:

Օգտագործված մեթոդներ - գրականության ուսումասիրություն, մանկավարժական փորձարկում, դիտարկում :

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլուխ 1 Գրաճանաչողության մեթոդիկա

1.1Գրաճանաչողության մեթոդները հայ դպրոցում

Հայ դպրոցն ունի գրաճանաչության մեթոդների հարուստ գանձարան, որը վկայում է հայ ժողովրդի, հայ մտավորականների՝ աճող սերնդի կրթության,ասել է՝ ազգապահպանման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի առկայությունը:

Այսօր ևս անընդհատ պրպտումներ են կատարվում գրաճանաչության ադյունավետ մեթոդների և դրանց իրականացման եղանակների մշակման ուղղությամբ:Մասնավորապես ուշագրավ է սփյուռքի հայկական կրթօջախներում սովորող երեխաների համար նոր այբբենարանների,մայրենիի դասագրքերի ուղղությամբ ազգանվեր շարժումը:

Հայ դպրոցում գործադրված գրաճանաչության մեթոդներից շատերը կարճ կյանք են ունեցել, սակայն մի մասից առանձին տարրեր այսօր էլ դեռևս օգտագործվում են աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայ մանուկներին գրաճանաչ դարձնելու գործընթացում:Այս իմաստով գրաճանաչության մեթոդիկայի ճիտշ օգտագործումը կապահովի գործընթացի արդյունավետությունը:



1. Հնչական կամ պատմական մեթոդ

Հիմնադիրն ու տարածողը Մեսրոպ Մաշտոցն էր:Ըստ Սեդրակ Մանդինյանի `գրաճանաչության պատմության վաղ շրջանում գործադրվել է հնչական մեթոդը:<<Հայոց գիրը ոչ թե պատկերագրություն կամ նկարադրոշմ գրություն է, այլ հնչյունների նշան: Յուրաքանչյուր ձայն յուր սեփական նշանն է ստացել: Սկզբներում մեր այբուբենը մեծ կատարելություն պիտի ունենար այնպես,որ այն ժամանակ գրության համար միայն մի կանոն կարող էր լինել. գրի՞ր, ինչպես որ դու հնչում ես>>: Խ. Աբովյանը սովորեցնում էր ճանաչել և գրել բոլոր տառերը `յուրաքանչյուր տառի ուսուցումը կապելով նրա հնչյունի հետ:

2. Գրկապության կամ տառանունների մեթոդ

Այս մեթոդը հայ դպրոցում տիրապետել է մինչև 19-րդ առաջին կեսը:Այս մեթոդով գրաճանաչության ուսուցման ժամանակ երեխաներին սովորեցնում էին տառանունները և ճանաչել տալիս դրանց տառերը: Որևէ բառ կարդալու համար աշակերտները նախ պետք է ասեին այդ բառի մեջ մտնող տառերի անունները,ապա դրանք իրար կապելով`արտասանեին բառը:

3. Վանկային մեթոդ

Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս իբրև կարդալու ամենափոքր միավոր ընդունվում էր վանկը: Այբբենարաններում օգտագործվում էր վանկերի նշման մի քանի եղանակ ` բառի վանկերը գրվումէին իրարից անջատ` ժա մա ցույց,փոքրիկ գծիկով բաժանված /ժա-մա-ցույց/կամ ամբողջական ` օգտագործելով աղեղանման գծեր:

4. Նորմալ բառերի մեթոդ

Գրել-կարդալ սովորեցնելուհամար երեխաներին առաջարկվում էին իրարաից անկախ, ինքնուրույն,պարզ և հեշտընկալ բառեր,բացատրվում էր դրանց իմաստը, որը նպաստում էր այդ բառերը առանց դժվարության ընթերցելուն:Այնուհետև կատարվում էր հնչունային վերլուծություն, ապա այդ բառը գրվում էր գրատախտակին, ուշադրություն էին դարձնում նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր տառի:Այնուհետև յուրաքանրյուր տառը և ամբողջ բառը գրվում էր օդում կամ սեղանի վրա:Այդ կարողությունների ձևավորումից հետո սովորած

հնչյուներն ու տառերն օգտագործվում էին ծանոթ հնչյունների և տառերի կապակցության մեջ կամ դրանք ավելացվում էին արդեն ծանոթ բառերի վրա՝ նոր բառեր ստանալու համար:Օրինակ՝ մատ-արմատ, ութ-թութ և այլն:

5. Օրգանական մեթոդ

Այս մեթոդի հիմնադիրն է Սեդրակ Մանդինյանը, նա հրաժարվեց իր առաջադրված հնչական մեթոդից և վերակազմեց << Նոր այբբենարան օրգանական մեթոդով>> դասագիրքը: Այս դասագրքում բաղաձայնները անկախ հնչյուններ չէին համարվում, իսկ կարդալու ժամանակ բառի մեջ հենակետեր էին դրվում: Առանձին և անկախ էին ուսուցանվում միայն ձայնավորները, իսկ բաղաձայները ուսուցանվում էին ձայնավորների հետ,որպեսզի դրանք արտասանվեն մաքուր:Նա գտնում էր, որ երեխային գրել սովորեցնելը հարկավոր է սկսել միայն այն ժամանակ,երբ նրա մեջ ծագել է գրելու ցանկություն:

1.2Գրաճանաչության ժամանակակից մեթոդները և փուլերը

Գրաճանաչության ուսոցման մեթոդիկայի պատմական զարգացման գործընթացում մեկը մյուսին փոխարինել են տարբեր մանկավարժահոգեբանական հիմնավորում ունեցող մեթոդներ:

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից՝

- վերլուծական-համադրական հնչյունավանկայն
- վելուծական-համադրական հնչյունաբառային մեթոդ

Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել ուսուցման մատչելությունը, զննականության,հաջորդականության ,պարզից դեպի բարդ, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները:Գրաճանաչության ողջ գործընթացում պետք է պահպանել մանկավարժահոգեբանական մի քանի պահանջներ.

- Դասի որոշակի փուլերում ուսուցիչը պետք է բացատրի աշակերտներին, թե իրենք ինչ պիտի անեն այդ պահին իսկ աշխատանքի ավարտից հետո պետք է ամփոփի ՝ ինչ արեցին և ինչ սովորեցին:
- Աշակերտներին տրվող առաջադրանքները ,հարցերն ու բացատրությունները պետք է ձևակերպվեն հակիրճ, հստակ, հասկանալի բառերով, պահպանելով մատչելիության սկզբունքը:

- Օգտագործել համագործակցային և խաղային տեխնոլոգիայի առավելությունները:
- Օգտագործել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն ուսուցման մատչելությանը և հետաքրքրաշարժությանը, առանց աշակերտներին ծանրաբեռնելու ՝ ուշադրությունը կետրոնացնել դասին:
- Դասը պլանավորելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր սովորողի պատրաստակամության մակարդակը:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

- Նախաայբբենական շրջան,
- Այբբենական կամ գրուսուցման շրջան,
- Հետայբբենական շրջան:

Այսպիսով ուսուցման գործընթացը պետք է համապատասխանի չափորոշչային պահանջներին, պետք է ձևավորել՝ լեզվական գրագիտություն և կարողունակությթուն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին,գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով:

Համամարդկային և ազգային արժեքների ձևավորումը չափորոշչային պահանջ է,որը պետք է ձևավորել տարրական դպրոցից : Մշակութային կարողունակությունների զարգացման շնորհիվ սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոծիչներ:Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետքության դերը:

Ժողովրդական և քաղաքացիական կարողունակաություն. նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ:

Ինքաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման:

Նախաայբբենական շրջան	Այբբենական շրջան	Հետայբբենական շրջան
Այս շրջանում լուծվում են ուսուցման այդ փուլի մանկյավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով ,նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի խնդիրներ: Որոնք բաժանվում են երկու խմբի. ➢ Կազմակերպական • Աշակերտներին ծանոթացնել նրանց համար նոր ուսումնական գործունենությանը. • Մանկակաան կոլեկտիվի ստեղծում, • Ծանոթություն ուսուցչի հետ, կրթական հաստատության կարգուկանոններին և այլն: ➢ Ուսումնական • Ուսուցման	Այս շրջանի կրթադաստիարակչական խնդիներն են. • Ուսուցանել հայրենի բոլոր հնչյուն-տառերը, • Սովորեցնել ճիշտ համադրել հնչյունները և տառերը • Գործնականորեն յուրացնել վայելուր գրելու կանոնները • Զարգացնել ընթերցասիրության նկատմամբ սեր և հետաքրքրություն • Ձևավորել ընթերցողական տարրական ունակություններ, • Զարգացնել հայերեն խոսքն ու հայեցի մտածողություն, • Իրականացնել ճանաչողական ,դաստիարակչակ	Այս շրջանի կրթադաստիարակչական խնդիներն են. • Զարգացնել այբբենական շրջանում ձեռք բերած հասկանալով և վերլուծելով կարդալու կարողությունները, • Կատարելագործել ինչպես վայելչագրական, այնպես էլ ուղղակգրական կանոններին համապատասխան գրելու կարողությունները, • Զարգացնել բանավոր կապակցված խոսք, • Համկարգել և ամփոփել գրաճանաչողության նախորդ

գործընթացում աշակերտների կարողությունների ,հմտությունների գիտելիքների սահմանների բացահայտումը՝նախ ապայբբենական շրջանի վերջում: • Երեխաների պատրաստակամության աստիճանի բացահայտումը: ➢ Գրաճանաչողության նախաայբբենական շրջանի դասերին ներկայցվող մանկավարժամեթոդական անպահանջները. • Դասը կազմակերպելիս հաշվի առնելո աշակերտի տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ուշադրության և հիշողության առանձնահատկությունները: Դասի ընթացքում	ան ,զարգացնող աշխատանքներ՝ն պաստելով աշակերտի անձի ներդաշնակ զարգացմանը: **Գրելու ուսուցումը այբբենական շրջանում.** • Զարգացնել գրենական պիտույքներից օգտվելու կարողությունները • Զարգացնել տառապատկերներն ընկալելու և դրանք տետրում տրված օրինակաի համձայն գրելու, այնուհետև ինքնուրույն գրելու կարողությունները • Տեքստից ձեռագիր արտագրելու կարողությունն և այլն: • Վարժությունների օգնությամբ զարգացնել և ամրացնել ձեռքի մկանները:	փուլերում ձեռք բերված գիտելիքներն և կարողությունները • Զարգացնել աշակերտների բարոյականային որակներընն • Դաստիարակել ազգային և համամարդկային գծեր,ընդլայնել ախարհի մասին ունեցած նրանց պատկերացումները:

անհրաժեշտ ժամանակն առ ժամանակ փոխել գործունենության ձևերը : ➢ Գրաճանաչության նախաայբբենական շրջանիում իրականացվող աշխատանքի բովանդակությունը:		

Գլուխ 2 Ազգային և համամարդկային արժեքների ձևավորման ուղիները առաջին դասարանցիների ուսուցման գործընթացում

2. 1 Ազգային և համամարդկային արժեք հասկացությունները կրտսեր դպրոցականների արժեհամակարգում

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Այսօր շատ կարևոր է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ: Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացն երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը , և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:

Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը: Տարրական դպրոցում ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա:

Այսպիսով արժեքները պետք է հարմարեցնենք կրթության բովանդակությանը և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը, մշակված է նաև տարրական կրթության բովանդակության յուրահատկության և կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Այս մոտեցումն առավելագույնս արտահայտում է մեր կողմից քննարկվող հիմնախնդրի առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը բնութագրվում է միասնական խնդիրների լուծմամբ: Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ արժեքային կողմնորոշումների ձևավորման առումով այնպիսին են, որ հնարավորություն չեն ընձեռում տարրական դպրոցի ուսումնական գործընթացում ներառել բոլոր արժեքները: Այստեղ առաջնային նշանակություն են ձեռք բերում նրանց հասկացողությանն ու հոգեբանությանը մատչելի, արդիական արժեքները: Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակության մեջ, պետք է արտացոլվեն այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են տարրական դասարաններում ուսուցման գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա, հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները: Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և՝ վարքային բաղադրատարրերը. Դա բազմիցս արտացոլվում է մանկավարժական և հոգեբանական հետազոտություններում: Իմացական բաղադրատարրերը համոզմունքների, պատկերացումների,

կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական – ճանաչողական գործընթացների , սոցիալական փորձի արդյունքում: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իմացական ճանաչողական, և վարքային բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները: Վարքային բաղադրատարրը ներկայացնում է անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները: Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներ են , դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում [1, 5]: Բաղադրատարրերից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել անձի արժեքային ողջ համակարգի փոփոխության [2]:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումը սկզբնական շրջանում ձևավորվում է սուր աֆեկտային վիճակների հետևանքով՝ առանց որևէ իմացաճանաչողական էական հիմնավորումների: Այդ տարիքում երեխան բախվում է շատ արժեքների հետ, որոնք անհրաժեշտ է յուրացնել: Ս. Ի. Մասլովը գրում է՝ «Մի շարք պատճառներով անհնարին է իրականացնել արժեքների յուրացումն իմացական գործընթացների միջոցով: Նախ՝ ժամանակը պարզապես չի բավականացնի , երկրորդ՝ շատ արժեքներ անհասանելի են երեխայի գիտակցությանն ու հասկացողությանը: Այդ տարիքում հուզական ընկալման միջոցով երեխան կարող է յուրացնել շատ արժեքներ» :

Ըստ Ս. Ի. Մասլովի կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

1. առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. Սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն ՝ իր հուզական- զգայական ոլորտի մակարդակի համեմատ,

2. երկրորդ աստիճանը կապված է ընկալվող օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ

3. երրորդ աստիճանում իրականանում է կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման , այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի:

հուզական արժեքային բաղադրատարրերի յուրացման ընդհանուր դիդակտիկական մեթոդների այսպիսի համակարգ.

- Համարժեք հույզերի մեթոդ,
- Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդ,
- Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդ:

Համարժեք հույզերի մեթոդն այն է, որ կրտսեր դպրոցականներին մղում է ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ հուզական անդրադարձի և ճանաչողական գործունեության: Այն թույլ է տալիս արժեքային կողմնորոշումների ձևավորումն իրականացնել դրանց յուրացման առաջին աստիճանում : Հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդը հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականների կողմից գիտակցել յուրացվող արժեքների նշանակությունը: Այն սովորողների կողմից իրենց ապրումների կամ ուսումնասիրվող օբյեկտի նկատմամբ դրական հարաբերությունների ձևավորմանն ուղղված տարբեր միջոցների կազմակերպումն է: Հույզերի և արժեքների շեշտադրումն իրականացվում է արժեքների յուրացման գործընթացի երկրորդ աստիճանում, որտեղ արժեքների հուզական ընկալումն ամրապնդվում է սովորողների իմացաճանաչողական ոլորտի վրա ակտիվ ազդեցությամբ, որոնցից են ներշնչանքը, համոզմունքը, գնահատումը : Դպրոցական ուսուցման ընթացքում դրանց օգտագործման հնարավորություններն ուսումնասիրվել են տարբեր տեսաբանների ու հետազոտողների կողմից, դաստիարակությանը նվիրված աշխատություններում: Համոզմունքները, որպես անձի գիտակցված պահանջմունքներ, կապված են իրականության նկատմամբ գիտակցված և քննադատական վերաբերմունքի ձևավորման հետ, ներշնչանքի մեջ խտանում են այս կամ այն իրավիճակի վերաբերյալ տպավորված ապրումները: Գնահատումն անձի գործունեության համար օբյեկտի նշանակության բնութագրումն է՝ նրա պահանջմունքների բավարարման նպատակով: Այն դրսևորվում է անձի արդեն ձևավորված նախասիրությունների հիման վրա: Արժեքային կողմնորոշումների ձևավորման ընթացքում մեծ դեր է խաղում մանկավարժական գնահատումը, որը կանխատեսում և մեծ չափով նախապատրաստում է սովորողների կողմից արժեքների յուրացման աստիճանը : Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին: Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր

արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորվեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների և դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը: Կրտսեր դպրոցականների կողմից արժեքների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը: Ընտրությունը փոխադարձ բարդ համագործակցային գործընթաց է, որում առկա են հուզակամային և ռացիոնալ բաղադրատարրերը, այսինքն արարքի հուզական ընկալումից մինչև տրամաբանական իմաստավորում: Դա կապակցված է ապրումների ու դրդապատճառների պայքարի հետ և բարենպաստ ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ավելի խոր ու արդյունավետ ձևավորման վրա : Տարրական ուսուցման ընթացքում նշված մեթոդներն կիրառվում են ՝ հաշվի առնելով առարկաների յուրահատկությունները: Դրանցում առկա նյութում հուզական անդրադարձը և արժեքային շեշտադրումները կարող են արտահայտվել երկակիորեն. նախ ինքնին ազգային մշակույթի արտահայտման ձև է, երկրորդ՝ դա այն աշխարհն է, որը շրջապատում է մեզ իր ողջ բարդությամբ, կապերով ու փոխհարաբերություններով: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունն ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված են տարրական դպրոցում ուսուցման նպատակների, կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա:

Այսպիսով 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

2. 2. Դասապլանների մշակումը և փորձարկումը մայրենիի դասաժամերին

Ստորև ներկայացված են մշակված ուսումնական պլանը,որի նպատակն՝ դաստիարակել ազգային և համամարդկային գծեր,ընդլայնել աշխարհի մասին ունեցած նրանց պատկերացումները,ունեցածը ճանաչելու և արժևորելու բարոյական որակներ:Նմանատիպ դասերը պետք է կրեն շարունակական բնույթ ,որպեսզի արդյունքը լինի տեսանելի:

Դասի պլան

Առարկա – Մայրենի

Դասարան – 1

Դասի թեմա –<< Հայերենի տառերը>> բնագրի ուսուցում /էջ110/

1-դասաժամ

Դասի նպատակը

Կրթական՝- աշակերտներին ծանոթացնել ***<< Հայերենի տառերը>> բնագրի*** հետ:Ծանոթացնել բնագրի հիմնական հասկացություններին,նկարազարդումներին անրադառնալով՝Վռամշապուհ,Մեսրոպ Մաշտոցի,Կորյունի նկարներին, փոքրիկ զրույց սկսել աշակերտների հետ :Բացատրել՝ տառերի ստեղծման մեջ նրանց դերը և ներդրումը:

Զարգացնող՝- զարգացնել գրելու և կարդալու տեխնիկան,նախապատրաստել ավելի բարդ տեքստեր,գեղարվեստական ստեղծագործություններ ընթերցելուն:Զարգացնել ճանաչողական կարողությունները,խոսքը և մտածողությունը:

Դաստիարակչական՝- Դաստիարակել ազգային և համամարդկային գծեր,ընդլայնել ախարհի մասին ունեցած նրանց պատկերացումները,ունեցածը ճանաչելու և արժևորելու բարոյական որակներ:

Սարքավորումներ՝-գրատախտակ, գունավոր թղթեր,հայկական դրոշներ, այբուբենի տառերով տեսապաստառ և այլն:

Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառում- զարգացնող և խաղային տեխնոլոգիաներ:

Դասի տիպը- նոր նյութի մատուցում և ամրապնդում = համակցված դաս:

Մեթոդներ և միջոցներ `խաղ՝ <<Ձինվոր տառերը>>,կարդալու և պատմողական մեթոդներ,ուշադրությունն կետրոնացնող մեթոդներ,խմբային աշխատանք :

Դասի ընթացքը՝

- *Կազնակերպչական մաս*
  Կատարել հաշվառում, ներկայացնել նոր դասի վերնագիրը:Լուծել կարգապահական խնդիրները:
- *Նոր նյութի բացատրություն*
  Բացատրել նոր նյութը օգտագործելով աշակերտների գիտելիքները:
- *Նոր նյութի ամրապնդում*
  Ստուգել նոր նյութի ընկալումը հարցերի միջոցով:
- *Դասի անդրադարձ և եզրափակում*
  Ամփոփել դասը, նշել կարևոր դրույթները:

Նոր նյութի բացատրություն

Դասի բացատրությունն սկսել էջի նկարազարդումների բովանդակությամբ:

Պատմել տառերի ստեղծման պատմությունը, կազմակերպել էքսկուրսիա դեպի Օշական, <<Այբուբենի>> հուշարձան:Հաջորդ օրը հարցնել տպավորությունների մասին:էքսկուրսիան կունենա ճանաչողական նշանակություն,աշակերտներին պետք է սովորեցնել արժևորել դրանք , քանի որ դրանք ազգային արժեքներ են մեր հայերիս համար: <<Այբուբենի>> հուշարձանի մոտ կազմակերպել ազգային երգի պարի մրցույթ ,աշակերտներին հնարավորություն տալ ցույց տալ իրենց կարողությունները , կրկին նպաստելով ազգային արժեքների ձևավորմանը:

Հայրենի տառերը համեմատել զինվորների հետ,դրանց շնորհիվ մենք գրում ենք մեր խոսքը, դրա շնորհիվ ունենք հայոց պատմությունը,հեքիաթներ,բանաստեղծություններ և այլն:

Դուք պետք է լավ սովորեք,որպեսզի գրագետ լինեք՝կարողանաք կարդալ.գրել և պատմել:

Կարդալ բնագիրը աշակերտների համար,բացատրել անծանոթ բառերը՝ *հաստատուն շարք,խրոխտ զինվորներ, ճշմարտախոս զինվոր* և այլն:

Նոր նյութի ամրապնդում

Աշակերտներին բաժանել չորս խմբի ,և բոլորին տալ դրոշներ:

Նախապես պատրաստել հարցեր, հանձնարարել պատասխանելու դեպքում բարձրացնել դրոշները:

- *Ինչի՞ մասին է այս պատմությունը;*
- *Ի՞նչ է այբուբենը*
- *Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը*
- *Ինչու՞ ենք սովորում տառերը:*
- *Ինչու՞ են տառերը համարվում զիվորներ:*
- *Հայերը պետք է խոսեն_____:*

Դասի անդրադարձ և եզրափակում

Երաժշտական ֆիզկուլտ դադար:

Լսել երաժշտական այբուբենը,կրկնել և ամրապնդել այն:

https://www.youtube.com/watch?v=Js5yWv4oSkI

Խաղային տեխնոլոգիայի կիրառում.

Խաղ՝ <<Զինվոր տառերը>>

Քանի որ արդեն նշել ենք ,որ հայրենի տառերը հայոց զինվորներն են, աշակերտներին հանձնարարել դասավորել այուբնի տառը ճիշտ հերթականությամբ ,դրոշի դիմաց պաշտպանելով մեր երկիրը: Զարգացնել աշակերտների բարոյական որակները,ցույց տալ գրագետ լինելու նշանակությունը ազգապահպանության գործում:

2-դասաժամ

Դասի խնդիրը՝

- Բացահայտել աշակերտների մոտ ձևավորված ազգային արժեհամակարգի պատկերը,թե ինչպե՞ս են ընկալում աշխարհը և իրենց երկիրը:

Դասի արդյունավետությունը ստուգելու նպատակով դասընթացը կազմակերպել հետևյալ ձևով:

Աշակերտներին բաժանել հինգ խմբի,հանձնարարել նախապես պատրաստել նկարչական պարագաները և իրենց պատկերացմամբ նկարել Հայաստանը:

Հանձնարարություն կնպաստի աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը,ինչպես նաև թույլ կտա հասկանալ նրանց աշխարհընկալման մակարդակը:

Ըստ աշակերտների կատարած աշխատանքի,կատարվեց մանկավարժահոգեբանական վերլուծություն և պարզ դարձավ.

Աշակերտները հայրենիքը ասոցացնում են՝ Արարատ լեռան պատկերի,հայկական դրոշի,տան,զինվորի, բնության վառ պատկերների հետ:

Նրանց պատկերավոր հիշողության մեջ տպավորվել էր <<Հայերենի տառերը >> բնագրի նկարազարդումները:Այս ամենը կապված է նրանց տարիքային առնաձնահատկությունների հետ ,այս տարիքի աշակերտները ունեն `զարգացած պատկերավոր հիշողություն :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եզրակացրեցինք հետևյալը.

- Հետազոտական աշխատանքի ընթացքում տեսական ուսումնասիրություններից պարզ դարձավ ,որ գրաճանաչողության գործընթացում գոյություն ունեն ժամանակակից մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռնում կրտսեր դպրոցականների հետ իրականացնել դաստիարկության տարբեր տեսակներ՝հենվելով ազգային և համամարդկային արժեքների ձևավորման վրա:

- Ազգային և համամարդկային արժեքների ձևավորման ուղիները առաջին դասարանցիների մոտ ներառում է յուրացման ընդհանուր դիդակտիկական մեթոդների այսպիսի համակարգ ինչպիսիք են՝ համարժեք հույզերի մեթոդը, հույզերի և արժեքների շեշտադրման մեթոդը, հուզական-արժեքային հակադրությունների մեթոդը:

- Մշակված ուսումնական պլանի կիրառմամբ՝կատարեցինք մանկավարժահոգեբանական վերլուծություն,որի պատկերը հետևյալն է.

  - ✓ Աշակերտները հայրենիքը ասոցացնում են՝ Արարատ լեռան պատկերի,հայկական դրոշի,տան,զինվորի, բնության վառ պատկերների հետ:
  - ✓ Նրանց պատկերավոր հիշողության մեջ տպավորվել էր <<Հայերենի տառերը >> բնագրի նկարազարդումները:Այս ամենը կապված է նրանց տարիքային առնաձնահատկությունների հետ ,այս տարիքի աշակերտները ունեն `զարգացած պատկերավոր հիշողություն :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002
2. Ա. Պետրոսյան<< Գրաճանաչության և նրա ուսուցման արդի պրակտիկան>> – սեղմագիր-2014
3. Գյուլամիրյան Ջ.Հ <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>-2014թ
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե., Զանգակ, 2018թ.
5. Վարդումանյան Ս.ժամանակակից մանկավարժական մոտեցումներ ձեռնարկ-2005թ.
6. Маслов С.И. Эмоционально –ценностное образобание младших школьников-1999
7. П.М. Машерова-<<Методика обученя грамоте и каллиграфии>>-2022г.